ԻԶ. ՏԱՐԻ ԹԻՒ 1856 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 19 ՓԵՏՐՎԱՐ 1879

# ՄԵԾՄՈՒԱՑԸ ՀԱՎԱՏԻՍ

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

ԹԵՐԹԸ 1 ՂՐՇ. ԹՈՒՂԹ

## Ա Զ Գ Ա Յ Ի Ն

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(Տար. և վերջ տես Թիւ 1855)

Հեռատես և հասուն գրչուխներ մինչդեռ կ՚ընդունին մէկ կողմէ որ Հայութիւնը Եւրոպայի գանգատներուն առջև կարեւորութիւն ստացաւ, միջազգային դաշնաց մէջ անուն մը, տեղ մը շահեցաւ, եթէ կողման միւս կողմէ որ ինչպէս պատերազմի նոյնպէս ներկայ զինադադարի միջոցին՝ սաստիկ տառապեցան ու կ՚տառապին Հայք. տակաւին այս համոզումն ունին որ օտար օգնութեան վըրայ յոյս դնելու, դաշնագիրներու հաւատ ընծայելու տեղ, պէտք է ազգային բոլոր բարոյական մտաւորական և մանաւանդ նիւթական ոյժերու վրայ կռթնիլ և ազգն այս փոթորկալի և քայքայուն վիճակէն առաջնորդել դէպ ի վերաշինութիւն.

Ծանր ու դժուարին գործ է այս իրաւ, բայց մեռելական հանդարտութիւնն և յուսահատական խաղաղութիւնն աւելի կորստական ազգային գոյութեան դէմ քան թէ տառապանք ու թշուառութիւններ, որ կ՚շարժեն, կ՚գրգռեն սիրտ ու միտք և այս դառն կացութենէն ելնելու համար աւելի աշխոյժ ու յարատեւ միջոցներ ի գործ դնելու կ՚գրգռեն.

Եւ արդարև Տաճկի Հայաստանի ամեն խորշերէն աղաղակներ, բողոքներ կ՚լսուին, ու տեսակ տեսակ ցաւոց որ տգիտութենէ, անկարողութենէ ու անապահովութենէ յառաջ կ՚գան դարման կ՚պահանջեն և վերակենդանութեան փափաք կ՚յայտնեն. Այս փափաքը նոյն իսկ երեւութական խաղաղութիւն ու հանգիստ վայելող ռուսաբնակ ազգայնոց մէջ ալ կայ անշուշտ. տակաւին զայն արտայայտելու ազատութենէ զուրկ՝ գէթ բոլորովին տրամադիր կերեւին անուղղակի կերպով ձայնակցիլ ու աջակցիլ մեզ և հեռահայեաց քաղաքականութեամբ յորդորել մեզ որ կարելի եղածին չափ օգուտ քաղենք պարագաներէն և այն առաւելութիւններէն որ միջազգային դաշնագրութիւնները մեզի քիչ շատ կ՚ընծայեն.

Այս աղաղակներուն ու յորդորներուն նոյնպէս դառն փորձառութենէ յառաջ եկած համոզման առջև անտարբեր և անզգայ չմնացին այն ազգայինք, որ իրենց դիրքով և ազատութեամբ կարող էին գործել ու նոր զարկ մը տալ ազգային յառաջդիմութեան, քանի որ ինքնօրինութեան հասնելու յոյսերն թերեւս կանխահաս էին և պատրանք միայն. Այս ազգայնոց մէջ բնականաբար առաջին կարգը պիտի բռնէին անխտիր ամեն Պոլսաբնակ Հայք, որոց մէջ նոր եռանդ ու խանդ մը սկսաւ արթննալ այս տարւոյն ընթացքին մէջ, ազգային վերաշինութեան տարերքը վերակազմելու, արդէն ազգօգուտ ուղղութեամբ կազմուած մէկ քանի նոր ընկերութեանց նիւթական և բարոյական ոյժ տալու, որպէս զի իրենց նպատակին աւելի դիւրաւ հասնին, և այլեւայլ խորհուրդներ երկնելու, Հայրենեաց շահուն համար երկար տարիներէ ի վեր առաջին անգամն էր որ Հայք աչք կը դարձնէին Հայաստանի, առաջին անգամն էր որ կզգային թէ առանց անոր Հայութիւն չկայ, թէև թշուառ, աւերակ, հալածուած, մասամբ կործանուած ու զոհ գացած Հայաստանն մ՚ունէին իրենց աչաց առջև. Փափաքելի է որ այս ընդհանուր ճգունքն, այս ազգօգուտ խորհուրդներն կիսկատար չմնային, ինչպէս որ առաջ մնացած են և մեր վրայ Եւրոպայի տածած անյարատեւութեան և քաղաքական ապիկարութեան կասկածները չյայտնուէին.

Պատերազմ մը՝ որ վեր ՚ի վայր շրջեց ամեն դիւանագիտական հաշիւներ, և ոմանց անկախութիւն, ոմանց թշուառութիւն ու ստրկութիւն բաշխեց, դաշնագրութիւններ՝ որ լռելեայն կ՚ընդունին թէ գիտութեամբ միայն խիղճով, նկրտող ազգերն իրենցմէ վեր են և կրնան որոշ նպատակի ու ազատութեան հասնիլ, տէրութիւն մը՝ որ կ՚խոստովանի իր տկարութիւնն, անանկութիւնն ու հիւանդութիւնը և սոսկ տէրութեանց ներհակ շահերու եւ ազգայնութեանց բուռն ճգանց ներքև ճնշուելով կ՚հեծի ու կ՚քայքայի, միջազգային օրէնքներ՝ որ կիսամեռ քաղաքական մարմնոյ մը վրայ չեն կրնար ներգործել և տրամադրուած բարենորոգումներն իրագնելու համար դիւանագիտական միջոցներն անզօր գտանուելով դարձ՝ ժողովրդոց վիճակին մէջ զգալի փոփոխութիւն մը դէպ ի լաւն չտեսնուելէ ի զատ՝ օրէ օր թշուառութեան ու անկման երևոյթներ յերեւան կ՚ելլեն, դէպքերու կոյր մղում մ՚որ տէրութիւններ ու ազգեր կ՚տանի իրենց անցեալ անհեռատեսութեան շնորհիւ պատրաստուած անդունդին, ահա ասոնք այնպիսի ծանր ու խոշոր իրողութիւններ են զոր միայն իր ապագային վրայ անվստահ եւ յուսահատ, և լոկ ազգային սնափառութիւնը գգուող անհիմն այլ փայլուն առաւելութիւններով գոհ եղող ժողովուրդ մը չէ կարող նշմարել.

Մենք կ՚համարձակինք ըսելու որ Թուրքիոյ հայ ժողովուրդըն իր աչքը բացած կ՚տեսնէ, կ՚տեսնէ իր նախորդ դարերու և մինչև իսկ Արեւելեան խնդրոյն բորբոքած ժամանակը՝ ըրած ծանր սխալանքն, զոր նշանակել աւելորդ է, կ՚տեսնէ վերջապէս այն օրէնքն որով ազգերն նախ «բարոյական» եւ «մտաւորական» և ազգային յառաջ ու օգտակար հիմնարկութիւններով կ՚յառաջադիմեն և կ՚յուսանք որ իր բոլոր կարողութիւնն ամփոփելով, իր բոլոր հարուստ, հանճարեղ, գիտուն, արուեստագէտ զաւակներն ի հանդէս կոչելով պիտի ջանայ շահիլ այն անգին ժամանակներն որ ազգային սնոտի ու անշահ երկպառակութեամբ ու դժտութեամբ անցան, սահմանադրական անօգուտ կռիւներով լցան, վարչային ու դիւանական անգործադրելի խորհուրդներով փայլեցան, քաղաքագիտական ծուռ ուղղութեամբ վրիպեցան, ազգային իսկական շահուց անգիտակցութեամբ կորան, և նոր տարւոյն հետ նոր ազգային կեանք մ՚ըսկըսելով՝ կեանք մ՚որու համարըն ունի տալ եւրոպական ժողովրդոց և տէրութեանց, կը յուսանք որ պիտի յաջողի, որպէսզի չըլլի այն վիհին մէջ զոր պիտի բանան անշուշտ քաղաքական փոթորիկներն ու երկրաշարժներն, թերեւս մօտալուտ պարագայի մը մէջ . . .

### ՄՇՈՅ ՀԱՆՐԱԳԻՐԸ

(Տար. Թիւ 1855)

Ա.

Սուտ կ՚զրպարտեն առաջին յօդուածովս, զՄամբրէ վարդապետն հակըռթայ ցոյց տալով, վանօրէից խորհրդոյ հրահանգին և Ազգ. որոշումներն չգործադրող, առանց հաստատելու թէ հրահանգին որ յօդուածի դէմ մեղանչած է, և ինչ պարագայի մէջ, և փոխանակ յառաջադիմութեան համար տրուած

